ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2010-2011թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող միջնորդություններ)

2011 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4530 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 17635 միջնորդություն *(ընդհանուրը՝ 4530+17635=22165)*:

Ստացված 4530 քրեական գործից ավարտվել է 3608-ը (79,6%):

Ստացված 17635 միջնորդություններից ավարտվել է 17481-ը (99,1%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 21089 դատական գործ (3608+17481=21089)):

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4394 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 15363 միջնորդություն *(ընդհանուրը՝ 4394+15363=19757)*:

Ստացված 4394 քրեական գործից ավարտվել է 3624-ը (82,4%):

Ստացված 15363 միջնորդություններից ավարտվել է 15223-ը (99%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 18847 դատական գործ (3624+15223=18847)):

2011 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 3608 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 4874 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 3126 գործով (86,6%) կայացվել է դատավճիռ՝ 4254 անձի նկատմամբ, 425 գործով (11,8%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 561 անձի (561=466+95, որից 466 անձի վերաբերյալ՝ համաներման ակտի կիրառման հիմքով, 95 անձի վերաբերյալ՝ օրենքով նախատեսված այլ հիմքերով) նկատմամբ, 57 գործով (1,6%)՝ 59 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 3624 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 4650 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 3433 գործով (94,7%) կայացվել է դատավճիռ՝ 4437 անձի նկատմամբ, 138 գործով (3,8%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 160 անձի նկատմամբ, 53 գործով (1,5%)՝ 53 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

2011 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 77 (23+54=77) 1,8% (77:4254*100=1,8%) անձ, որից 23-ը (23:4254*100=0,54%)՝ մասնակի, իսկ 54-ը (54:4254*100=1,3%)՝ լրիվ:

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 56 (21+35=56) 1,3% (56:4437*100=1,3%) անձ, որից 21-ը՝ (21:4437*100=0,47%) մասնակի, իսկ 35-ը՝ (35:4437*100=0,8%) լրիվ:

2011 թվականի ընթացքում դատապարտվել է 4200 (4254-54=4200) 98,7% (4200:4254*100=98,7%) անձ:

2011 թվականի ընթացքում դատապարտված 4200 անձանցից ազատազրկման ձևով ռեալ պատիժ է նշանակվել 1960 (46,7%) անձի նկատմամբ: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 541 անձի նկատմամբ (13%):

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում դատապարտվել է 4402 (4402:4437*100=99,2%) անձ:

2010 թվականի ընթացքում դատապարտված 4402 անձանցից ազատազրկման ձևով ռեալ պատիժ է նշանակվել 1950 (44,2%) անձի նկատմամբ: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 920 անձի նկատմամբ (30%):

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում՝ 2010 թվականի համեմատությամբ, դատարաններում ստացված քրեական գործերի քանակն ավելացել է 136-ով (4530-4394=136) 3,1% (136:4394*100=3,1%), դատի տրված անձանց թիվն ավելացել է 224-ով (4874-4650=224) 4,8%, անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, նվազել է 379-ով (920-541=379) 40,8%, դատապարտվածների թիվը նվազել է՝ 202-ով (4402-4200=202) 4,6%, իսկ արդարացվածների թիվն աճել է 21-ով (77-56=21) 37,5% (21:56*100=37,5%):

Հարկ է նշել, որ ինչպես 2010 թվականին, այնպես էլ 2011 թվականին դատապարտված անձանց թվում զգալի թիվ են կազմել գողության և խարդախության համար դատապարտվածները:

Այսպես.

- 2010 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 913 անձ /դատապարտվածների թվի 20,7%-ը, 913:4402*100=20,7%/, խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 219 անձ /դատապարտվածների թվի 5%-ը, 219:4402*100=5%/, յուրացնելու կամ վատնելու համար (ՀՀ քր. օր. 179-րդ հոդված)՝ 87 անձ /դատապարտվածների թվի 2%-ը, 87:4402*100=2%/:

- 2011 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 812 անձ /դատապարտվածների թվի 19,3%-ը, 812:4200*100=19,3%/, խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 172 անձ /դատապարտվածների թվի 4,1%-ը, 172:4200*100=4,1%/, յուրացնելու կամ վատնելու համար (ՀՀ քր. օր. 179-րդ հոդված)՝ 73 անձ /դատապարտվածների թվի 1,7%-ը, 73:4200*100=1,7%/:

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում՝ 2010 թվականի համեմատությամբ, գողության համար դատապարտվածների թիվը նվազել է 101-ով (913-812=101) 11,1% (101:913*100=11,1%), խարդախության համար դատապարտվածների թիվը նվազել է 47-ով (219-172=47) 21,5% (47:219*100=21,5%), յուրացնելու կամ վատնելու համար դատապարտվածների թիվը նվազել է 14-ով (87-73=14) 16,1% (14:87*100=16,1%):

Համեմատվող ժամանակահատվածում արձանագրվել է նաև դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների թվի նվազում.

- Սպանության համար (ՀՀ քր. օր. 104-րդ հոդված) 2010 թվականին դատապարտվել է 76 անձ, իսկ 2011 թվականին՝ 55, նվազումը՝ 21 (76-55=21) անձ (27,6%):

- Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար (ՀՀ քր. օր. 242-րդ հոդված) 2010 թվականին դատապարտվել է 118 անձ, իսկ 2011 թվականին՝ 107, նվազումը՝ 11 (118-107) անձ (9,3%):

- Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու համար (ՀՀ քր. օր. 327-րդ հոդված) 2010 թվականին դատապարտվել է 49 անձ, իսկ 2011 թվականին՝ 19, նվազումը՝ 30 (49-19=30) անձ (61,2%):

Ի դեպ, աճ է արձանագրվել խուլիգանության և իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար դատապարտվածների թվում, մասնավորապես.

- Խուլիգանության համար (ՀՀ քր. օր. 258-րդ հոդված) 2010 թվականին դատապարտվել է 410 անձ, իսկ 2011 թվականին՝ 502, աճը՝ 92 (502-410=92) անձ (22,4%):

- Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար (ՀՀ քր. օր. 375-րդ հոդված) 2010 թվականին դատապարտվել է 82 անձ, իսկ 2011 թվականին՝ 91, աճը՝ 9 (91-82=9) անձ (11%):

- Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար (ՀՀ քր. օր. 316-րդ հոդված) 2010 թվականին դատապարտվել է 51 անձ, իսկ 2011 թվականին՝ 61 , աճը՝ 10 (61-51=10) անձ (19,6%):

2011 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 17635 միջնորդություններից 13946 (79,1%)-ը վերաբերվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 3262 (23,4%)-ը հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Դրանցից 3088-ը (94,7%) բավարարվել է, 164-ը (5%) մերժվել, իսկ 10-ը (0,3%) թողնվել է առանց քննության:

Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 448 միջնորդություն, որից 131-ը (29,2%) բավարարվել է, 291-ը (65%)՝ մերժվել, 20-ը (4,5%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 6-ը (1,3%)՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 15363 միջնորդություններից 13589 (88,5%)-ը վերաբերվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 3570 (25,3%)-ը հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Դրանցից 3434-ը (96,2%) բավարարվել է, 123-ը (3,44%) մերժվել, իսկ 13-ը (0,36%) թողնվել է առանց քննության:

Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 461 միջնորդություն, որից 151-ը (32,8%) բավարարվել է, 272-ը (59%)՝ մերժվել, 26-ը (5,6%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 12-ը (2,6%)՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2011 թվականի ընթացքում ստացվել է 3099 վերաքննիչ բողոք՝ 2618 դատական ակտի դեմ */այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12,4%-ը /2618:21089*100=12,4/:* Բերված բողոքներից 2042-ով (66%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1653 դատական ակտ, իսկ մնացած՝ 1057-ով (34%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 965 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1653 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1542-ով (93,3%), այդ թվում՝ 1344 (87,2%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 198-ը (12,8%)՝ բեկանվել է: Բեկանված 198 ակտերից 21-ով (10,6%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 177-ով (89,4%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված 1057 բողոքներից բավարարվել է 102-ը (9,7%), մերժվել՝ 773-ը (73,1%), 91-ը (8,6%) թողնվել է առանց քննության, 61-ով (5,8%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 30-ը (2,8%)՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2618 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 3099 բողոքներից 227-ը (8,7%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 47 (20,8%) բողոքի քննություն 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 180 /227-47=180/ բողոքներից 35-ը (19,4%) բավարարվել է, 132-ը (73,3%)՝ մերժվել, 13-ով (7,3%) վերաքննիչ վարույթը կարճվել է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2010 թվականի ընթացքում ստացվել է 2490 վերաքննիչ բողոք՝ 1761 դատական ակտի դեմ */այսինքն՝ բողոքարկվել*

*է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 9,3%-ը /1761:18847*100=9,3/*: Բերված բողոքներից 1565-ով (62,9%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1004 դատական ակտ, իսկ մնացած՝ 925-ով (37,1%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 757 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1004 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 917-ով (91,3%), այդ թվում՝ 610 (66,5%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 307-ը (33,5%)՝ բեկանվել է: Բեկանված 307 ակտերից 19-ով (6,2%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 288-ով (93,8%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված 925 բողոքներից բավարարվել է 73-ը (7,9%), մերժվել՝ 727-ը (78,6%), 15-ը (1,6%) թողնվել է առանց քննության, 28-ով (3%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 82-ը (8,9%)՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 1761 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 2490 բողոքներից 349-ը (19,9%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 86 (24,7%) բողոքի քննություն 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 263 /349-86=263/ բողոքներից 75-ը (28,5%) բավարարվել է, 174-ը (66,1%)՝ մերժվել, 14-ով (5,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է:

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվն աճել է 609-ով (3099-2490=609) 24,5%, այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 477-ով (2042-1565=477) 30,5%, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերվածներինը՝ 132-ով (1057-925=132) 14,3%:

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվն աճել է 625-ով (1542-917=625) 68,2%, այդ թվում՝ մերժված բողոքների թիվն աճել է 734-ով (1344-610=734) 120%, իսկ բավարարվածների թիվը՝ նվազել է 109-ով (307-198=109) 35,5%:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվն աճել է 29-ով (102-73=29) (39,7%), մերժվածների թիվը՝ 46-ով (773-727=46) 6,3%, առանց քննության թողնվածների թիվը՝ 76-ով (91-15=76) 506%, վերաքննիչ վարույթի կարճումների քանակը՝ 33-ով (61-28=33) 117%:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 609-ով (3099-2490=609) 24,5%, բավարարվածների ընդհանուր թիվը նվազել է 80-ով ((307+73=380)-(198+102=300)=80)) 21,1%, մերժվածների թիվն աճել է 780-ով ((1344+773=2117)-(610+727=1337)=80)) 58,3%:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվը նվազել է 122-ով (349-227=122) 35%, այդ թվում՝ բավարարվածների թիվը նվազել է 40-ով (75-35=40) 53,3%, իսկ մերժվածներինը՝ 42-ով (174-132=42) 24,1%:

Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 21089 (3608+17481=21089) դատական ակտերից բողոքարկվել է 2618-ը՝ 12,4% (2618:21089*100=12,4%), որից բեկանվել է 300-ը (198+102=300) 11,4%, այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 98,6% /21089-300=20789:21089*100=98,6%/, իսկ բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 88,5% /2618-300=2318:2618*100=88,5%/:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2011 թվականի ընթացքում ստացվել է 1203 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 977 դատական ակտ:

Բերված 1203 բողոքներից 976-ը (81,1%) վերադարձվել է՝ 823 որոշմամբ, 45-ն (3,7%) ընդունվել է վարույթ, 76-ը (6,3%)՝ թողնվել է առանց քննության, 106 (8,9%) բողոքի ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 45 բողոքներից՝

- 13-ը (վարույթ ընդունածի 28,8%) մերժվել է,
- 16-ը (35,5%) բավարարվել է ամբողջությամբ,
- 12-ը (26,6%) բավարարվել է մասնակի,
- 4-ի (8,9%) ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 16 բողոքներից 5-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բողոքարկված 977 դատական ակտի դեմ բերված 1203 բողոքներից 162-ը (16,5%) ներկայացվել է դատախազության կողմից, որից 15-ի (9,2%) ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 147 (91%) /162-15=147/ բողոքներից 128-ը (87%) վերադարձվել է, 7-ը (4,8%) բավարարվել (5-ը՝ ամբողջությամբ, 2-ը՝ մասնակի), 9-ը՝ (6,1%) մերժվել, 3-ը (2,1%) թողնվել է առանց քննության:

- Բերված 1203 բողոքներից 1041-ը (86,5%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 95-ի (9,1%) ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 946 (91%) /1041-95=946/ բողոքներից 848-ը (89,7%) վերադարձվել է, 21-ը (2,2%) բավարարվել (11-ը՝ ամբողջությամբ, 10-ը՝ մասնակի), 4-ը՝ (0,4%) մերժվել,73-ը (7,7%) թողնվել է առանց քննության:

Համեմատության կարգով նշենք, որ 2010թ. ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացվել է 1043 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 882 դատական ակտ:

Բերված 1043 բողոքներից 829-ը (79,4%) վերադարձվել է՝ 704 որոշմամբ, 76-ն (7,3%) ընդունվել է վարույթ, 88-ը (8,5%)՝ թողնվել է առանց քննության, 6-ով (0,6%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 44 (4,2%) բողոքի ընթացքը 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 76 բողոքներից՝

- 15-ը (վարույթ ընդունածի 19,7%) մերժվել է,
- 20-ը (26,3%) բավարարվել է ամբողջությամբ,
- 39-ը (51,3%) բավարարվել է մասնակի,
- 2-ի ընթացքը 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ բողոքներից 6-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բողոքարկված 882 դատական ակտի դեմ բերված 1043 բողոքներից 106-ը (12%) ներկայացվել է դատախազության կողմից, որից 8-ի (7,5%) ընթացքը 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 98 (92,4%) /106-8=98/ բողոքներից 71-ը (72,4%) վերադարձվել է, 18-ը (18,4%) բավարարվել (6-ը՝ ամբողջությամբ, 12-ը՝ մասնակի), 4-ը (4,1%) մերժվել է, 5-ը (5,1%) թողնվել է առանց քննության:

- Բերված 1043 բողոքներից 937-ը (89,9%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 38-ի (4%) ընթացքը 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 899 (96%) /937-38=899/ բողոքներից 758-ը (84,3%) վերադարձվել է, 41-ը (4,6%) բավարարվել (14-ը՝ ամբողջությամբ, 27-ը՝ մասնակի), 11-ը (1,2%) մերժվել է, 83-ը (9,2%) թողնվել է առանց քննության, 6-ով (0,7%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը:

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում՝ 2010 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն աճել է 160-ով (1203-1043=160) 15,3%, բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 95-ով (977-882=95) 10,8%, վերադարձված բողոքների քանակը՝ 147-ով (976-829=147) 17,7%: Վարույթ ընդունվածների թիվը նվազել է 31-ով (76-45=31), մերժվածների թիվը՝ 2-ով (15-13=2), ամբողջությամբ բավարարվածների թիվը՝ 4-ով (20-16=4), մասնակի բավարարվածների թիվը՝ 27-ով (39-12=27):

Դատախազության կողմից բերված բողոքների թիվն աճել է 56-ով (162-106=56) 52,8%, դրանց թվում՝ վերադարձված բողոքների թիվն աճել է 57-ով (128-71=57), մերժվածների թիվն աճել է 5-ով (9-4=5), ամբողջությամբ բավարարվածների թիվը նվազել է 1-ով (6-5=1), մասնակի բավարարվածների թիվը նվազել է 10-ով (12-10=2):

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվն աճել է 104-ով (1041-937=104) 11,1%, դրանց թվում՝ վերադարձված բողոքների թիվն աճել է 90-ով (848-758=90), մերժվածների թիվը՝ 7-ով (11-4=7), ամբողջությամբ բավարարվածների թիվը՝ 3-ով (14-11=3), մասնակի բավարարվածների թիվը՝ 17-ով (27-10=17):

*Այսպիսով, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերով 2569 /1542+1057-30/ դատական ակտերից բողոքարկվել է 977-ը (38%), որից բեկանվել է 28-ը (16+12=28) 2,9%, այսինքն՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 98,9% /2569-28=2541:2569*100=98,9%/, իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 97,1% /977-28=949:977*100=97,1%/:*

*Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 98,4% /Քայլ 1-ին՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 300, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 28, ստացվել է 328 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 21089-ից, հանվել է 328 բեկանված դատական ակտերի թիվը, ստացվել է 20761, այսինքն՝ 20761 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 98,4% /21089-328=20761:21089*100=98,4%/:*